

**Որքան կարելի է ձեզի, ամեն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք (Յոովմ. 12.18)**

Մարդ մը, որ հարցեր կ'ունենար իր դրացիին հետ ջանաց խաղաղութեամբ լուծել զանոնք: Համոզուելով, որ կարելի պիտի ըլլար սիրով վերջ տալ ծագած դժուարութեանց, ան դիմեց օրէնքին: Բացատրելու համար իր տեսակետը, ան ըսաւ. «Լուրջ ջանք ըրի գործադրելու առաքելին պատուէրը՝ խաղաղութիւն ունենալու մարդոց հետ, բայց անօգուտ: Շնորհակալ եմ Աստուծոյս անոր համար, որ ան չէ ըսած թէ խաղաղութեամբ պէտք է ապրիլ բոլոր մարդոց հետ կեանքի բոլոր պարագաներուն տակ: Աստուած այդպէս չ'ըսեր որովհետեւ գիտէ, թէ կարգ մը մարդոց հետ խաղաղութեամբ ապրիլ կարելի չէ»:

Դժբախտաբար շատեր իրենց կարելի ի գործ չեն դնել խաղաղութեամբ ապրելու համար: Տղայ մը հարցուց իր հօրը, թէ ինչպէ՞ս կը սկսին պատերազմները եւ հայրը այսպէս պատասխանեց. «Առաջին աշխարհամարտը սկսաւ երբ Գերմանիա գրաւեց Պելճիֆան»: Ճիշդ այդ պահուն մայրը միջամտեց եւ ըսաւ. «Հանիս նշմարութիւնը յայտնէ: Պատերազմը սկսաւ մարդու մը սպանութեան պատճառով»: Ամուսինը բարկացաւ եւ պոռաց. «Ո՞վ կը պատասխանէ տղուն հարցումին. դո՞ւն թէ ես»: Կիսն ալ բարկացաւ եւ դուռը ուժգին զարնելով դուրս ելաւ: Տղան ըսաւ. «Հայր, հիմա գիտեմ, թէ պատերազմները ինչպէ՞ս կը սկսին»:

Արդեօք դուն բարկութեամբ կը հակադրես, թէ մշակած ես խաղաղութեամբ ապրելու սովորութիւնը: Յիսուս աղօթեց իր թշնամիներուն համար: Դուն ալ կ'աղօթե՞ս: Փորձեմք խաղաղութեամբ ապրիլ բոլորին հետ:

**ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ**

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, Երեքշաբթի, 30 Ապրիլ 2019-էն սկսեալ եւ ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ պատարագի ընթացքին, հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս: Այս սուրբ պատարագին նպատակն է առիթ տալ մեր այն հայորդիներուն, որոնք Կիրակիի կողքին, շաբթուան ընթացքին եւս կը փափաքին Հայ Եկեղեցոյ հոգեւոր սնունդը ստանալ: Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները իրենց ամենօրեայ հեւքին մէջ պահ մը կանգ առնելու եւ աղօթքով Աստուծոյ ու իրարու հետ ըլլալու:

**Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:**

**ՀԱՍՑԷ.**

**ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ** - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 – facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019

ԹԻԻ 33

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**  
Երգ. 4.9-15, 8.14: Ես. 7.10-16: Գղ. 3.29-4.7:  
**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 2.1-7**

**ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 2.1-7**

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիւրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթղեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթեց խանձարուով եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

**ԱՌԱԿԱՅ (Գ. 23, 19-23)**

*Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շուայր աղքատ կ'ըլլան եւ շատ քուռը՝ պատուտած հանդերձներ կը հագցնէ:*

*Հնազանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, խրատն ու հանճարը:*

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ**  
**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԵՆ**  
**4.9-15, 8.14**

Գրաւեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս գրաւեցիր մէկ նայուած-  
ֆով, վզիդ շնորհալի մէկ շարժումով:

Ի՛նչ գգլիսիչ է սերդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն անլի փողոց է սերդ՝ գինիէն, եւ զգեստներուդ անոյշ բուր-  
մունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս, մեղր եւ կաթ կը ծորի լեզուէդ եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

Փակուած պարտէզ է իմ հարս հոգեակս, փակուած պարտէզ, կնփուած աղբիւր:

Նոնենիներու դրախտ մըն եւ դուն ամենէն ընտիր եւ բուրումնաւէտ տուն-  
կերով՝ հինայ ու նարդոս, նարդոս ու ֆրֆում, խնկեղէզ ու կինամոն, եւ խնկաբեր բոլոր ծառերով՝ զըմուռս ու հալուէ, եւ ընտիր բոլոր խնկենիները:

Բուրաստաններու աղբիւր եւ կեանքի ջուրին ակը, որ Լիբանանէն կը բխի:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց ֆեզ, մօրդ արգանդէն ֆեզ պատրաստեց, ո՛վ կիններու գեղեցկագոյնը. մայրդ անթե-  
րի ծնաւ ֆեզ:

**«Զօրացի՛ր ու քա՛ջ եղիր: Մի՛ վախճար բնաւ եւ մի՛ վարանիր, որովհետեւ ես՝ քու Տէր Աստուածդ, քու Հետդ եմ ո՛ւր որ ալ երթաս» (Յեսու 1.9)%**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ**  
**ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ**  
**3.29- -4.7**

Ապա ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանի՛ք կը նշանակէ, թէ Ար-  
րահամի գաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թէեւ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն, որ անիկա անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբար-  
ձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն, որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին, որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Իմաստութիւնը նաեւ պարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի, պարիսպներուն բարձունքէն կը ֆարձուի, ամբոցներուն դռներուն կը յայտարարուի եւ ֆղափներու դարպասներուն համարձակօրէն կը խօսուի (*Առակաց 1.20-21*):

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ**

«Վերափոխում» բառը, գրաբար լեզուով նկատի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրուիլ: Իսկապէս ալ, վերափոխումը Սուրբ Աստուածածինի մահուան յիշատակումն է, որ կը կատարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12 - 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկն է: Այս տօնին առթիւ մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի գալուստն ի փոխումն մօրն եւ կուսի»: Այլ խօսքով, տօնը կ'ակնարկէ այն պատահարին, ըստ որուն Քրիստոս ինք իջաւ իր մօր մահուան առթիւ եւ զինք փոխադրեց երկինք:

**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՆԵ՛Ց՝ ԽԱՂՈՂՕՐՅՆԵՔ**

«Հնաւանդ, գեղեցիկ, այլեւ բարոյ-  
յալից սովորութիւն էր հայ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը իբրեւ շնորհակալիք եւ առ ի երախտագիտութիւն Աստուծոյ կը տրուի: Եթէ նախաքրիստոնէական շրջանին այս բարոյյալից սովորութիւնը կար եւ ան կը մատուցուէր աստուածներուն, ապա պահուեցաւ գաղափարը եւ շարունակուեցաւ այդ ընծայաբերու-  
մը մէկ տարբերութեամբ՝ այս անգամ եկեղեցիին եւ անոր միջոցաւ ուր որ անհրաժեշտութիւն է:

Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի գինին, որ Ս. Պատարագի, Ս. Հաղորդութեան, Ս. Պսակի խորհուրդներուն մէջ խորհրդանշա-  
կան գործածութեան կը դրուի»:

**Շ Ա Ր Ա Կ Ա Ն**  
**ԿԱՆՈՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ**  
**ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ**  
**ՕՐՅ. ԴԶ (գրաբար)**

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալն եւ սուրբ կուսանքն ջահագգեստուք պայծառացեալ լուցանէին զըլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալդ ի կանայս:

Այսօր դնելով ըզսուրբ կոյսն առ դրանքն գերեզմանին, սպասէին եւ ակն ունէին տեսնի իսկ ինքնին գոյով, գեր ի վերոյ տեսեալ գարարիչն եկեալ բագում հրեշտակօփ. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալդ ի կանայս:

Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսըն թոուցեալ յօդս, եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս. մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ...

**(Աշխարհաբար)**

Այսօր միասին հաւաքուած սուրբերը՝ երանելի առաքեալներն ու սուրբ կոյսերը, լուսաւոր վզեւտներով պայծառացած, իրենց լապտերները կը վառեն եւ միաձայն կ'ըսեն՝ օրհնեալ եւ դուն կիններուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր սուրբ կոյսը գերեզմանին առջեւ դնելով կը սպասէին եւ կ'ակնկալէին ինքնին տիրոջ հոն ըլլալը, բայց տեսան որ Արարիչը վերէն կու գար բազում հրեշտակներով. եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ եւ դուն կիններուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր տեսան սուրբ կոյսին օդին մէջ թռչիլը եւ ամպեղէն կառքով վեր երկինք համբառնալը եւ երկնային խորաններուն մէջ մտնելը իմաստուն կոյսերուն հետ եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ եւ դուն կիններուն մէջ ամէնօրհնեալ: